ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

LOGISTICS SUPPORT DEPARTMENT OF
MINISTRY OF DEFENCE OF THE
REPUBLIC OF ARMENIA
ДЕПАРТАМЕНТ МАТЕРИАЛЬНО-
ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
Email :depart@mil.am
Հեռ. (+37410) 29-45-45
Ֆաքս. (+37410) 29-46-13

5 Bagrevand str.,0044 Yerevan
Ереван, 0044, Багреванд 5,
Email: depart@mil.am
Tel.Тел. (+37410) 29-45-45
Fax.Факс. (+37410) 29-46-13

№ ԴՄՄ/603
"19" 02 2018թ.

«Ժակ և Գոռ» ՍՊԸ -ի տնօրեն
պարոն Լ. Մաթևոսյանին
ՀՀ, ք. Հրազդան, Կենտրոն 19/40
էլ. հասցեն՝ saturn90@mail.ru
ՀՎՀՀ՝ 03012667

ՀՀ պաշտպանության նախարարության և «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի միջև 22.12.2017թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-4-23-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր՝ էր 2017թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 25.12.2017թ., ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել 96 անվանում ավտոպահեստամասեր՝ 72698500 (յոթանասուներկու միլիոն վեց հարյուր իննսունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր գնով, սակայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության համաձայն ընկերության կողմից մատակարարված ապրանքներից 46 անվանում՝ 37393500 (երեսունյոթ միլիոն երեք հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, ապրանքներ չեն ընդունվել տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության պատճառով:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի ա) ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. դեկտեմբերի 28-ից՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ 46 անվանում ավտոպահեստամասերի մասով, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 37393500 (երեսունյոթ միլիոն երեք հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին

փոխանցել 363493 (երեք հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ՝ որպես տուգանք (պայմանագրի 6.3 կետի համաձայն): Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ -ից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (տուժանք) 3739350 (երեք միլիոն յոթ հարյուր երեսունինը հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով՝ 900005000758 հաշվեհամարին:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ